


# ՊԱՐՏԵՆՔ ԵՎ ՊԱՐՊԱՆԵՆՔ ՄԵՐ ՄԱՅՐԵՆԻՆ

Ճակատագիրը մեզ՝ հայերին, ցրեց աշխարհով մեկ: Լինելով բնատուր բնորոշություններով օժտված՝ հայ մարդը շատ արագ յուրացնում է տեղի լեզուն, միաժամանակ մշտապես հոգ տանելով պահպանում է իր մայրենի լեզուն, ազգային ավանդույթներն ու սովորույթները:

Ռոստովի Հարավային դաշնային համալսարանի Սոցիոլոգիայի և տարածաշրջանագիտության ինստիտուտի հայագիտության կենտրոնում օտարերկրացի ուսանողները հնարավորություն ունեն սովորել հայերեն, հայ մշակույթ ու պատմություն (դասախոս Շովինար Մարգարյան):

Հայերենի նոր խմբակ է բացվել նաև Դոնի պետական հանրային գրադարանում (ուսուցչուհի Լուսինե Պետանյան):



Դոնի Ռոստովի Հարավային դաշնային համալսարանի Սոցիոլոգիայի և տարածաշրջանագիտության ինստիտուտի հայագիտության կենտրոնում օտարերկրացի ուսանողները սովորում են հայերեն (դասախոս Շովինար Մարգարյան):

Ռոստովի մարզի բոլոր կիրակնօրյա և ֆակուլտատիվ խմբակներում այսօր արդեն մեկնարկել է 2021-2022 թթ ուսումնական տարին: Դոնի համայնքում հայոց լեզուն դասավանդվում է որպես օտար լեզու: Նոր ուսումնական տարում Դոնի

Սյու տարի մեծ ակտիվություն է նկատվում ծնողների կողմից երեխաներին հայեցի կրթելու ու դաստիարակելու գործում, քանզի այս գործի նվիրյալ դեսպանների, հայոց լեզվի սիրված ուսուցիչների



Արսյա քաղաքի համար 4 դպրոցի հայերեն խմբակի աշակերտները տոնում են Հայաստանի Հանրապետության անկախության 30-ամյակը (ուսուցչուհի Լուսինե Պետանյան):

(Լուսինե Պետանյան, Արմինե Հովսեփյան, Շովինար Մարգարյան, Արմինե Վարդանյան, Ջոյա Վարդանյան, Արմինե Ղազարյան, Լիլիթ Թևոյան, Ռուզաննա Կարապետյան) կողմից հայ մանուկները ստանում են հայրենասիրական առողջ դաստիարակություն, սեր Հայաստան հայրենիքի, նրա լեզվի, պատմության ու մշակույթի հանդեպ: Երեխաները ծանոթանում են երկրի աշխարհագրությանը, սովորույթ-

ներին, ծեսերին, եկեղեցական տոներին, չքնաղ բնությանը, սովորում են գնահատել գեղեցիկ ու օգտակարը, լինել բարի, առաքինի քաղաքացիներ:

Շնորհավորելով մեր մանուկներին ու ծնողներին նոր ուսումնական տարվա մեկնարկի առթիվ՝ միաժամանակ շնորհավորում ենք հայոց լեզվի ուսուցիչներին, պարի և գործիքային խմբերի ուսուցիչներին՝ իրենց մասնագիտական տոնի առթիվ:



Անվանի հայագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Արտակ Մովսիսյանը հայագիտության այն երախտավորներին է, ով իր կարճատև կյանքի ընթացքում անընդելի հետք թողեց հայ պատմագրության, գիտակրթական ոլորտում, հասարակական կյանքում և ընդհանրապես իր ժամանակակիցների հիշողության մեջ: Մեծանուն պատմաբանի հայոց պատմության մի շարք հիմնահարցերի, հատկապես հայոց հնագույն պետականությունների վերաբերյալ ուսումնասիրությունները հայեցակարգային նշանակություն են ունեցել հայ պատմագիտության զարգացման գործում: Նախօրեին «Ձանգակ» գրատանը տեղի ունեցավ Ա. Մովսիսյանի «Հայաստանի նախամշտոցյան գրավոր մշակույթի պատմություն» գրքի շնորհանդեսը: Հատկանշական է, որ 2015 թ. նույն օրը սեպտեմբերի 22-ին նա պաշտպանել էր իր դոկտորական ատենախոսությունը «Հայաստանի գրավոր մշակույթը նախամշտոցյան ժամանակաշրջանում» թեմայով, որի համար նրան շնորհվել էր պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Մենագրությունն ընդգրկում է Հայկական լեռնաշխարհում գրի սկզբնավորումից մինչև Մեծարյա Մաշտոցի գյուղն ընկած ժամանակաշրջանը, այսինքն՝ գրի ծագման և զարգացման վաղ փուլերը, Մեծարյա Մաշտոցից առաջ Հայաստանում կիրառված գրային համակարգերը, դրանցով թողնված գրավոր հուշարձանների ուսումնասիրությունները: Հետազոտությունը կատարված է երկու տեսակի սկզբնաղբյուրների հենքի վրա՝ գրավոր աղբյուրների հաղորդումների և հնագիտական հայտնաբերումների: Մշակատունն ունի նախնաառաջ ճանաչողական նշանակություն, ամբողջությամբ լուսաբանում է հայոց գրավոր մշակույթի առաջին կեսի պատմությունը, օգնում հասկանալ դրա հետ կապված բազմաթիվ խնդիրներ, այդ թվում այն նախադրյալները, որոնք ծնունդ տվեցին մեր մշակույթի Ոսկեդարին: Արեւելագիտության ինստիտուտի տնօրեն Ռոբերտ Ղազարյանը «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի հետ գրույցում, անդրադառնալով աշխատության կարեւորությանը, նշեց, որ մեր հասարակության մի զգալի մասը

# ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՆԿՈՏՐՈՒՄ ՄԱՐՏԻԿԸ

## ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ ՆԱԽԱՄՇՏՈՑՅԱՆ ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՅԹԻ ՄԱՍԻՆ ԱՄԽԱՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

տեղյակ չէ, որ ունենք նախամշտոցյան հսկայական գրային շերտ, որը թողել էն թե Հայկական լեռնաշխարհի բնիկները հայերը, եւ թե հարեւան տարածաշրջանների պետությունների ներկայացուցիչները: «Դա մեր գրավոր ժառանգությունն է: Այդ ամենը հասարակությանը ներկայացնելու անհրաժեշտություն ունենք, որովհետեւ կա կարծիք, թե մեր բոլոր ձեռքբերումները եղել են 405 թվականից հետո, այսինքն՝ մաշտոցյան գրերի ստեղծումից հետո: Իսկապես մեծ, տիտանական այս աշխատանքը, որն անտիպ էր, մի փոքր կյրացնի գոյություն ունեցող բացը եւ ավելի խորը պատկերացում կտա այն մասին, թե ինչպիսի գրավոր մշակույթ ենք ունեցել մինչև Մաշտոցը»: Զրուցակիցը կարեւորեց ակադեմիական, նեղ մասնագիտական լեզվով գրված աշխատությունը գիտահանրամատչելի դեռնել ներկայացնելու, ինչպես նաև հետագայում այլ լեզուներով թարգմանելու և աշխարհին մատուցելու հնարավորությունը: Միանշանակորեն այս գաղափարների տարածումը կօգնի նաև հայագիտական մտեցումները ճանաչելի դարձնել Հայաստանի և հայկական գիտական շրջանակներին դուրս: Նշենք, որ աշխատությունը Ա. Մովսիսյանի դոկտորական ատենախոսության մշակված, խմբագրված և սրբագրված տարբերակն է, որն իրականացվել է Արեւելագիտության ինստիտուտում, մասնակից են եղել ԵՊՀ պատմության ֆակուլտետը, պատմության ինստիտուտը, իսկ գիրքը լույս է ընծայվել «Ձանգակ» հրատարակչության կողմից: ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Մովսիսյանի գնահատանքով, իր բովանդակությամբ գիրքը վերջին շրջանի պատմագիտական լավագույն ուսումնասիրություններից է: «Արտակ Մովսիսյանն աչքի էր ընկնում համարձակ հարցադրումներով, հայոց պատմության խնդիրների նորոգի լուսաբանմամբ, եւ նա իր համարձակ մտեցումներով ու խորը ուսումնասիրություններով կարողացել էր բացահայտել այնպիսի եղելություններ, որոնք իսկապես շատ խորը հետք են թողել հայ պատմագիտության մեջ»: Պատմության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Աշոտ Մելքոնյանի խոսքով, Արտակ Մովսիսյանն իր ամբողջ կյանքի ընթացքում մարտի մեջ էր, որը նա հաղթեց ապացուցելով թերահավատ և մի քիչ էլ չար մարդկանց, որ ինքը ճիշտ է: «Արտակը ժամանակի ընթացքում լրացրեց մեր պատմագիտության բազմաթիվ բացեր, վաղազույց շրջանն ամբողջապես, մի ամբողջ դարաշրջան: Նա հայոց պատմությունը վերադարձնում էր սերունդներին, եւ երբ մարդիկ պատմաշինություն կամ պատմաշինարարություն էին համարում նրա գրածները, այսօր առնվազն պետք է զղջան իրենց ասածների համար: Այսօր, առավել քան երբեք Արտակի տեսակը շատ է պետք մեր ժողովրդին, հայ մարդուն, որն ունի քաղաքացիական նկարագիր, ուղնուծուծով հայ է

և կպած է իր հայրենի հողին: Մինչդեռ, ցավոք, մեզանում մոլախոտ շատ կա»: Արտակ Մովսիսյանին բնութագրող կարեւոր հատկություններից մեկն էլ, ըստ Մելքոնյանի, այն էր, որ գիտական ոլորտում իր ամենակոշտ ընդդիմախոսներին կարողանում էր «իրենով անել» և երբեք ոչ մեկի հետ չէր թշնամանում: «Մենք գործ ունենք մի անհատի աշխատության հետ, որը կատարյալ ստեղծագործական վարպետությամբ նորություն բերեց հայ պատմագրությանը, անձնավորության, որը քաղաքացիություն տվեց իր տեսակետներին դասագրքերով, հայոց պետականության ծագումը հասցնելով երրորդ հազարամյակներ: Ազգային նկարագիր ունեցող աշխատությունների հրատարակումը եւ դրանց պրոպագանդումը չարփազանց կարեւոր են, քանի որ դրանք ոչ միայն այսօրվա, այլ և հետագա սերունդների համար են», — ասաց ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան Էդիկ Մինասյանը: Ավագ գործընկերը չի մոռանում նրա և միջակամությունը, դասախոսական վարպետությունը, համարձակ ելույթները, ինչպիսիք էր ընկնում դեռ ուսանողական տարիներին: Այսօր էլ զգացվում է պատմաբանի ներկայությունը հարազատ ֆակուլտետում: Մինասյանը հիշեցրեց, որ Արտակը էքստերն ավարտել է պատմության ֆակուլտետը գերագնացությամբ, իսկ դեռ ուսանողական տարիներին գրել է իր առաջին «Հնագույն պետությունն Հայաստանում. Արաստալ աշխատությունը, որը «Հայաստան» համահայկական հիմնադրամի հայտարարած «Երիտասարդ գիտնականներ-1993» մրցույթում ճանաչվել է հաղթող որպես լավագույն պատմագիտական աշխատանք: Մինասյանի խոսքով, հայագետը հաճախ նշում էր, որ մարդիկ մոլորվել են և հարկավոր է նրանց ճիշտ ուղու վրա կանգնեցնել: Այդ նպատակին էին ծառայում Մովսիսյանի դասախոսությունները, հոդվածները ու ֆիլմերը, որով գաղափարական ճակատում իբրև պայքարի մարտիկ առաջնախերություն էր տալիս կարեւորագույն թեմաներին: «Մա կապիտալ աշխատություն է, որտեղ շարադրված է նախամշտոցյան գրերի ստեղծման և զարգացման ամբողջական պատմությունը: Նա տվել է ոչ միայն մեհենագրության ամբողջական պատմությունը, այլ և առանձին անդրադարձ է կատարել նախաքրիստոնեական և դրանից հետո եղած կոնկրետ նախամշտոցյան գրային համակարգի ստեղծմանն ու կիրառմանը հայ իրականության մեջ: Այս գործում առաջիններից մեկն էր, որը համարձակորեն գրային մշակույթը դարձրեց քաղաքակրթության շարժիչ ուժ: Աշխատանքի վերջում տրված է նախամշտոցյան գրավոր մշակույթի կիրառման կարեւորությունը նաև մեր օրերում», — ասաց Մինասյանը, շեշտելով, որ աշխատությունը վստահաբար կճանաչի մեր սերունդներին և ուղեկիշ կդառնա ոչ միայն պատմաբանների, բանասերների, այլ և հետագո-

տողների համար: Բրյուսովի անվան պետական համալսարանի մանկավարժության և լեզուների դասավանդման մեթոդիկայի ամբիոն դասախոս, բ.գ.թ., դոցենտ Հրաչիկ Հակոբջանյանը բարձր գնահատեց Մովսիսյանի ավանդը հայ մշակութաբանության մեջ, առանց առանձնացնելու հայ պատմագրությունից: «Նա իր հետ բերեց հայ պատմական մշակույթի կամ պատմականության ձևավորման նոր վարպետ, հայ լեզվամտածողության ու մշակութաբանության նոր մտեցում: Տեղի ունեցավ հետաքրքիր մի բան. Արտակն ընդունեց շատ յուրք մարտահրավերը, որտեղ տարավ մեծ հաղթանակ անկախ բոլոր խանգարիչ գործոններից», — ասաց նա: Լեզվաբանի խոսքով, Արտակը մտքը էր գործել նոր ոլորտ, որն էլ ազգային գաղափարաբանության ձևավորումը, եւ այն այսուհետեւ պետք է դառնա հայկական ազգային գաղափարաբանության հետագա զարգացման ակունքը: «Ազգային գաղափարաբանությունը ազգային պետականության մտեցումն էր, որը թույլ չէր տա ոչ մի ոտնձգություն հայկական մշակույթի դրսեվորումների հանդեպ»: Ներկայիս փոստանք հայտնեցին, որ Արտակ Մովսիսյանի անժամանակ մահը ընկերներին, գործընկերներին, ուսանողներին եւ ամբողջ հայ հասարակությանը գրեց տաղանդավոր մտավորականի, լավագույն մասնագետ-հայագետի, նվիրյալ հայրորդու ներկայությունից, որն իր կարճ, բայց բովանդակային կյանքի ընթացքում ընդամենը 50 տարի, ստեղծեց հայ պատմագրության լավագույն գործերից, գրեց երկու տասնակից ավելի մենագրություններ, շուրջ 100-ի հասնող գիտական հոդվածներ, ուսումնական ձեռնարկներ, դասագրքեր, որոնցով այսօր կրթվում և դաստիարակվում է մեր սերունդը: Արտակ Մովսիսյանը մեծ սեր է հարգանք էր վայելում և շարունակում է առայսօր վայելել իր ընկերների, ուսանողների, գործընկերների մոտ, որը փոխադարձ էր, ինչի մասին էր վկայում նաև այդօրվա լեզվա-լեզուն սրահը: Ներկայիս ընդգծում էին նրա ջերմ հայրենասիրությունը, նվիրվածությունը իր ժողովրդին ու պատմությանը, եւ իհարկե գիտնականի համարձակությունն ու վճռակետային պաշտպանությունն սեփական տեսակետները: Երջանակահիշատակ Արտակ Մովսիսյանի իր աշխատությունն ամփոփում է հետևյալ կերպ: «Նախամշտոցյան Հայաստանում կիրառվել են 12 գրային համակարգեր, կանգնեցվել են բազմա-հազար արձանագրություններ մայրենի եւ օտար լեզուներով: Դա ավելի քան խոսուն վկայություն է մեր նախնիների գրի և գրականության նկատմամբ տաած հարգանքի և սիրո, որի պերճախոս ապացույցն է դպրության Տիր աստծո պաշտամունքը նախաքրիստոնեական դարաշրջանում: Այդ վերաբերմունքը շարունակվեց նաև հետագայում՝ Մեծարյա Մաշտոցի ու նրա հանձարեղ ժառանգների սրբացմամբ, ինչի ակնհատեսն ու վկան ենք այսօր մենք...»: